ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ

Republic of Armenia, Yerevan Municipality
Yerevan Scientific Medical Center

Республика Армения, Мэрия г. Еревана
Ереван Научно-медицинский центр

N5/17-126
16.03.2026թ.

«ՍՈՖԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին տնօրեն՝ Սվետլանա Թարվերդյանին
/գտնվելու վայրի հասցե՝ ք. Երևան Նոր Նորք 9-րդ զզծ, 33շ., բն. 4/

«Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ի
/գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հր. Ներսիսյան 7,
գրանցման համար՝ 222.120.00271,
գրանցված՝ 19.03.2004թ., ՀՎՀՀ՝ 01002597/
Տնօրեն Հովիկ Սերգեյի Բալյանից

ԾԱՆՈՒՑՈՒՄ
/Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին/

Հարգելի տիկին Թարվերդյան

«Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Սոֆի Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2026թ.-ի հունվարի 21-ին կնքված և 2026թ.-ի հունվարի 27-ին կնքված համաձայնագրով ուժի մեջ մտած ԵԲԳԿ-ԷԱՃԾՁԲ-26/1-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Կատարողը ստանձնել է Լվացքատան ծառայությունների ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն նույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Լվացքատան ծառայությունների ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

Ստացվում է, որ Կողմերի միջև կնքվել է Ծառայությունների վճարովի մատուցման գնման պայմանագիր, որի հիմքով Կատարողը պարտավորվել է մատուցել նույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների համապատասխանող լվացքատան ծառայություններ, իսկ Պատվիրատուն ընդունել ծառայությունը և վճարել դրա համար:

Պայմանագրի 1.2. կետի համաձայն՝ «Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին համախատասխան եւ N 2 հավելվածով սահմանված ծառայության մատուցման ժամանակացույցով նախատեսված ժամկետներով»:

Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված «Տեխնիկական բնութագիր»-ի համաձայն՝ «Հետվիրահատական անկողնային պարագաների /ինֆեկցիայով, արյունով եւ թարախով/ լվացում, բարձերի քիմ մաքրում: Թաց լվացքի քիմ մաքրում եւ ախտահանում: Լվացքից հետո անկողնային պարագաները պետք է պահպանված լինեն լիարժեք տեսքով՝ լաքաների, արյան եւ բետադինի հետքերը պետք է մաքրված լինեն: Լվացված լվացքը չպետք է գունաթափված լինի: Տհաճ հոտի առկայություն չպետք է լինի: Կատարողը անկողնային պարագաները Պատվիրատուին հանձնում է արդուկած եւ չոր վիճակում: Ինֆեկցված անկողինները (Կատարողին հանձնվում է տարանջատված, պիտակավորված տոպրակներով եւ վերադարձվում է Պատվիրատուին համապատասխան պիտակներով) նախապես անհրաժեշտ է ենթարկել բարձր ջերմային մշակման եւ հետո նոր լվանալ վերոնշված պահանջին համապատասխան: Եթե անկողնային պարագաները վնասվեն Կատարողի կողմից, ապա Կատարողը պարտավորվում է փոխհատուցել նորով: Կատարողը ծառայությունները մատուցում է հետեւյալ կերպ՝ յուրաքանչյուր օր (բացի կիրակի օրերից) ժամը 10:00-ին (եթե հաջորդական ոչ աշխատանքային օրերի քանակը գերազանցում է 2-ից, ապա Կատարողը / լվացքի ծառայություններ մատուցող կազմակերպությունը / պարտավորվում է ոչ աշխատանքային 3-րդ օրը մատուցել ծառայություններ), Ք. Երեւան, Հր. Ներսիսյան 7 եւ ք. Երեւան, Պ. Սեւակի 5 հասցենից տեղափոխում է Պատվիրատուի տրամադրած լվացման ենթակա միավորները լվացքատուն, լվանում,արդուկում եւ ետ է վերադարձնում հաջորդ օրը, ժամը 10:00-ին: Կատարողը պիտակավորված տոպրակների/պարկերի պարունակությունը լվանում է առանձին-առանձին, ախտահանիչով եւ մյուս պահանջվող նյութերով, արդուկում եւ պոլիէթիլենային տոպրակներով լվացքը չոր վիճակում ետ է վերադարձնում Պատվիրատուին համապատասխան բաժանմունքների պիտակներով: Կատարողը սույն տեխնիկական բնութագիր – գնման ժամանակացույցով նշված միավորների տեղափոխումը կատարում է իր ուժերով: Առավելագույն քանակը՝ 15 000 կգ: Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից ծառայության մատուցման պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ ծավալի համար, ապա մնացած ծավալի մասով պայմանագիրը լուծվում է»:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ «Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 եւ/կամ N 2 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը»:

Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո, «ՍՈՖԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից բազմիցս խախտվել են ծառայությունների մատուցման ժամկետները, այն է՝ լվացման ենթակա ապրանքները Ք. Երեւան, Հր. Ներսիսյան 7 եւ ք. Երեւան, Պ. Սեւակի 5 հասցենից տեղափոխումը և լվացված ապրանքների ետ վերադարձը կատարվել են Պայմանագրի «Տեխնիկական բնութագիր»-ով նախատեսված ժամկետների խախտմամբ, մի շարք դեպքերում ընդհանրապես լվացման ենթակա ապրանքների տեղափոխումը նախատեսված օրը չի կատարվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու հիմքով «Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ն միակողմանի լուծում է 2026թ.-ի մարտի 16-ից Պայմանագիրը: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները՝ սույն ծանուցումը կիրապարակվի պաշտոնական տեղեկագրում:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 10 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար 585.000 (հինգ հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամի և 390.000 (երեք հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամի չափով, վճարելու համար: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Գնորդի բանկային հաշվին (ԱԿԲԱ ԲԱՆԿ ՓԲԸ, Հ/Հ 220300126152000),

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն «Սոֆի Գրուպ» ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:

ՏՆՕՐԵՆ Հ.ԲԱԼՅԱՆ